

Թ Ր Թ ՈՒ Ր Ը

ՔՐՈՒՄԱՆՆԵՐ

Երբ մեր նախածնողքը արտաքսուեցան զբախտէն, և Կայէն սպանեց իր Աբէլ եղբայրն մահուան հրեշտակը կանգնեցաւ Աստուծոյ առջեւ եւ ըսաւ.

— Տէր, մահուան տիրապետութիւնը այլ եւս նուիրագործուած է երկրիս վրայ: Մարդը հաստատեց, թէ ինք արժանի է իր ճակատագրին: Տո՛ւր ինձ իշխանութիւն, որ անոր կորստեան համար ինձ օժանդակներ գոյակերտեմ:

Աստուած կը համաձայնի:

Այն ատեն մահուան հրեշտակը կ'իջնէ երկրիս վրայ, ու սոսկալի ճիրաններ եւ արեան անյագ ծարաւ մը կու տայ առիւծին, իսկ անոր ալեծածան վարսերը՝ խիտ ու դեղնախայտ ձորի մը կը փոխարկէ: Վագրն ու յովազը, որոնք նախապէս խաղաղօրէն կ'աբաժէին ոչխարներու հօտերուն առընթեր, յեղակարծուտ մեծ բիծեր կ'ունենան իրենց փայլուն մորթերուն վրայ եւ արիւնարբու գազաններ կ'ըլլան: Յիններն ու արծիւները, կը սկսին ահաւոր կերպով վայել օդին մէջ, եւ իրենց սոսկալի ճիրաններով ոչնչացում ու մահ կը սփռեն հովիտներուն մէջ: Վիթխարի ու թունաւոր օձեր՝ կը սկսին ժայռերու քղանցներն ի վար սողոսկիլ՝ ազիտա գուշակօրէն սուլելով:

Կարճ ժամանակ մ'ետք, արդէն ամէն կողմ անհաշտ ատելութիւնն է որ կը տիրապետէ: Նոյն իսկ մահուան հրեշտակը, տեսնելով իր առաջացուցած սարսափը, կը խղճահարի. սակայն կը խաղաղի, ըսելով.

— Մարդը, ինքն ստեղծեց այս կեանքը իրեն համար: Ան՝ ձգեց զբախտին խաղաղութիւնն ու անդորրութիւնը, եւ ուղեց պայքարի, փոխանակ իշխելու:

Այսպէս կ'ըսէ ան, ու կը բնակեցնէ առնապատները ամենասոսկալի գազաններով, եւ գիշերները կը սազմանէ ամենէն ահաւոր գազանութիւններու համար:

Յետոյ, մահուան հրեշտակը կը թռչի գէպի մարդկային առաջին բնակարանը, կ'իջնէ Աբէլին սիրական ու սգաւոր քրոջ՝ Միրզային փոքր պարտէզին մէջ, ուր ան՝ ծաղիկներ ու ծառեր կը խնամէր: Այս պարտէզը դրախտին մէկ մանրանկարը կը ներկայացնէր իր զովասփիւռ շուքերով եւ քաղցրարոյր ծաղիկներով:

Հրեշտակը մտախոհ կանգ կ'առնէ, ազդուած՝ պարմանուհիի անմեղութեան ու սիրոյն առջեւ:

Միթէ անհրաժեշտ է, որ ես դարձեալ վիշտ մը առթեմ այս մաքրասիրտ վշտակիր հոգւոյն, — կ'ըսէ ան ինքնին. — սակայն՝ թող ըլլայ. մաքուր հոգւոյն մէջ՝ տառապանքը զուարթօրէն կը ծաղկի:

Ու գայիտոնը կը դպցնէ երկրին վրայ, եւ այն փոշիին մէջէն, ուր կանգնած էր ան, կը սկսի սողալ առաջին թրթուրը: Նորածին սողունը անմիջապէս կը սկսի իր շուրջը գտնուող բոյսերը, ու յետոյ նաեւ մօտակայ ծառերուն տերեւներն ու ծաղիկները կը ծեւ:

Քիչ մը ետք, Միրզան իր պարտէզը մըտնելով, չափազանց կը վախնայ, երբ իր ծաղիկներն ու թարմահաս ծառերուն տերեւները կը ծուռնուին ու կիսատ վիճակի մը մէջ կը տեսնէ: Նամանաւանդ, աւելի յառաջանալով, երբ, բարունակի մը վրայ մինչ այն ատեն չտեսնուած կըծող ծնօտներով կենդանի մը կը նկատէ, իր երկիւղը կը կրկնապատկուի, եւ եղբօրը Սէթին՝ քով կը վազէ. — Եկո՛ւր, որ տեսնես, կ'ըսէ Միրզան անոր, — օձ մը անգթաբար ծառերս կը մերկացնէ իրենց կանաչադարձութենէն: Ան հիմա, հոն բարունակի մը վրայ փակած կը կենայ:

Միասին պարտէզ կը մտնեն, եւ Սէթ թրթուրը տեսնելով կ'ըսէ.

— Չէ, Միրզա. այս կենդանին այնքան ահաւոր բան մը չէ, ինչ որ թուեր է քեզ քու երկիւղիդ մէջ: Օձը իր մարմնոյն վրայ կը սողայ, մինչդեռ սա՝ ստքեր ունի եւ ոչխարներու պէս տերեւներով կը սնանի: Հիմա պիտի ոչնչացնեմ զայն:

Այս ըսելով Սէթ կը ցնցէ ծառը եւ թրթուրը բարունակէն վար կ'իյնայ:

— Չէ, մի սպաններ, — կը խնդրէ Միրզան. այս կենդանին չի գիտեր թէ այս պարտէզը իմն է, եւ թէ՛ իմ ուրախութիւնն է ան: Մի սպաններ զինքը, ես անոր առատ սնունդ պիտի տամ որ չփճացնէ իմ պարտէզս:

— Սակայն երկրիս բոլոր անասունները մեր իշխանութեան ներքեւ կը գտնուին, անոնց ինչ որ ուղենք կրնանք ընել, — կ'ըսէ Սէթ:

— Միշտ լաւ է որ իրենց հետ բարեսիրտարար եւ մեղմօրէն վարուինք, քան թէ ոտիսի պէս, — կը պատասխանէ Միրզան, — թող որ ապրի ան:

Յետոյ, Միրզան թրթուրին շուրջ փոքր բակ մը կը շինէ, եւ ամէն առտու երեկոյ ծաղիկներ ու տերեւներ կու տայ անոր աւելի՝ քան ինչ որ կրնար ուտել:

Երբ երկնառաք հրեշտակը այս բանը կը տեսնէ, դարձեալ խորապէս կ'ազդուի ու կ'ըսէ. — Մարդ, իբրեւ աստուածային բընութիւն՝ բոլորովին կորսուած չէ: Ան ալ ուրեմն կրնայ իր թշնամիները սիրել, եւ չարութեան փոխարինել բարութեամբ:

Վայրկենական խորհրդածութենէ մ'ետք կը յարէ ան. — Չէ, բարիքը գերազանցապէս գեղեցիկ գործով մը պէտք է վարձատրել: Ու կը դպցնէ գայիտոնը թրթուրին, եւ կենդանին՝ բոլորապէս կ'իւրացնէ զարմանահրաշ յատկութիւն մը — պատրաստել ինք իր սեփական շիրիմը:

Այս բանը տեղի կ'ունենայ իրիկնադէմին:

Հետեւեալ օրը, առտուն կանուխ, Միրզան պարտէզ կը մտնէ, եւ փոքր բակէն ներս նայելով հոն չի կրնար տեսնել թրթուրը:

— Ո՛հ, անշուշտ կը քնանայ տակաւին, — կը խորհի պարմանուհին, — ես առանց զինքն արթնցնելու, իրեն համար ցօղաւտ տերեւներ ու ծաղիկներ պիտի քաղեմ:

Ու ամենամեծ հոգածութեամբ կը սկսի թրթուրին ամէնօրեայ սնունդը պատրաստել: Բարիք գործելով թրթուրին, Միրզան զայն ալ կը սիրէր, ինչպէս՝ իր ծաղիկներն ու ծառերը:

Երբ Միրզան իր հաւաքած տերեւներով ու ծաղիկներով կը մերձենայ թրթուրին գտնուած տեղը, հոն, փոխանակ անոր, կը տեսնէ փայլուն ու գեղեցիկ խոզակ մը, յար եւ նման՝ արծաթաթոյր ամպիկի մը: Ան կանգ կ'առնէ զարմացմամբ. յետոյ կը կանչէ հայրը, մայրը ու ամբողջ տնեցիները ու կ'ըսէ անոնց.

— Տեսէ՛ք, ի՜նչ զարմանալի արարած մըն է եղեր իմ սնուցածս. հիմա ան մեռած է ու կը պառկի այս շիրիմին մէջ: Ո՛վ գիտէ թերեւս դարձեալ կը վերակենդանանայ...

Այսպէս կ'ըսէ Միրզան, առանց գիտնալու, թէ իր այդ խօսքը մարգարէական յայտնութիւն մըն է:

Իր հայրը՝ Ադամ՝ կը յարէ.

— Ոչ ոք գիտէ այդ բանը: Սկիզբն եւ վախճանը ծածկուած են մարդկային տեսութենէն: Փոխադրենք այս զարմանալի արարածին շիրիմը մեր տան մէջ:

Ու անոնք թրթուրին դիակը կը փոխադրեն իրենց բնակարանին մէջ:

Ու այսպէս, կը պառկի այդ անծանօթ բնակարանին մէջ, յիշեցնելով մահը՝ բարեսիրտ Աբելին:

Անգամ մը, երբ ամէնքը հաւաքուած էին տան մէջ, յեղակարծուտ՝ բան մը մեղմիւ կը թրթուայ, ու փոքրիկ շիրիմը ինքնիրեն կը շարժի: Ամէնքը կու գան անոր քով եւ ակնկառոյց կը սպասեն թէ ինչ տեղի պիտի ունենայ: Ահա, յանկարծ արծաթաթոյր շիրիմը կը բացուի, եւ անոր մէջէն դուրս կ'ելլէ կենդանի արարած մը՝ զոյգ երկնակապոյտ թեւերով: Բացուած խոզակին վրայ արիւնի պէս կարմիր կաթիլ մը կը մնայ: Անմիջապէս յետոյ նորածին կենդանին իր թեւերը կը շարժէ, եւ թեթեւօրէն կը թռչի գէպի քաղցրարոյր ու ծաղկազարդ ծառերը:

Այն ատեն, նախնի մարդոց սրտերը սըրբազան հմայքով մը եւ ուրախութեամբ մը կը լցուին, եւ անոնք կը խորհին իրենցմէ եղած առաջին մեռելային համար: Կը բացուին իրենց հոգեկան աչքերը, եւ Աբելին կերպարանքը՝ յաւիտենապէս ողջ կը թուի իրենց:

(Թրգմ. Պուլկարեմէնէ)

Կ. Պ. ԼԱՅ